ուղղահայաց դիրքով չեն, որ պարտադիր է շատ այլ տեղերում։ Շատ չեն երկու գրերի արանքում, ելուստների տակին կամ վերևում, ինչպես նաև մեծ փորերի մեջ փոքրադիր գրերի թիվը։ Հազվադեպ են կրկնակի ապաթարցով կրճատված բառերը։

Սանահնի, ինչպես նաև Հաղբատի և Լոռվա շատ վայրերի արձանագրությունների մեջ նկատելի է գրերի ձևերի միօրինակություն գրեթե երեք հարյուր տարիների ընթացքում։ Աչքի է զարնում, որ ամեն մի փորագրիչ յուրացրել է իր նախորդի փորագրական արվեստը և աշխատել է պահպանել ավանդական ձևերը։ Սակայն, Սանահնի վանքի 21, 108, 112, 135, 142 և 171 արձանագրությունները գրված են տեղական ոճին բոլորովին հակառակ գրչությամբ, բայց դրանք կարող են համարվել բացառություն, մանավանդ որ 171-ից, գուցե նաև 142-ից բացի, մնացածները հետադարյան են, գրված 14-րդ դարից հետո, հավանաբար ոչ մասնագետ փորագրող վարպետների ձեռքով։ Հետաքրքիրն այն է, որ բացի 21-ից և 171-ից, մնացածները բոլորն էլ գրված են ձեռագրական գրչության ոճով։ Այդ արձանագրությունների գրերի ելուստներն երկար են լեզվի նման և հակված են ներքև։ Գրերի կամարները ևս հատուկ են ձեռագրերին և վիմական արձանագրությունների մեջ չեն գործածվում։ Կարելի է եզրակացնել, որ վերևում նշված մի բանի արձանագրությունները գրված են ձեռագիր գրքեր արտագրող գրիչների կողմից, ըստ երևույթին այն ժամանակ, երբ վանքում փորագրող մասնագետ չկար։

№ 21 արձանագրությունը, թեև ձեռագրական ոճի բոլորաձև երկաթագրով չի գրված, բայց գրերի վերջավորություններն այնքան ուժեղ են շեշտված, որ բոլորովին նման չեն Սանահնի մյուս արձանագրություններին։ Այդ արձանագրությունն իր գրերի ձևերով կապվում է Նոր Վարագավանքի և Խորանաշատի արձանագրություններին։ Այս փոքրիկ արձանագրությունն իր բաղմաթիվ եռագիր փակագրերով (Եսդ, Թփ, վաս, տու, գան, գին, այր, աւր, վար, ողի, եան, ովխ, ափի) նույնպես տարբերվում է Սանահնի մյուս արձանագրություններից։

Մյուս, № 171 արձանագրությունն աչքի է ընկնում իր գրերի կարճ ու լայն ձևերով, որ հատուկ էր Շիրակի և Արագածոտնի հին արձանագրություններին։ Եվ իրոք, այդ արձանագրությունը գրված է 1011 թվականին մի խաչքարի վրա, որ կանգնեցված է Սանահին գյուղի արևելյան ծայրին։

* * *

Սանահնի բոլոր 189 արձանագրություններից իրենց վրա թվական ունեն 90-ը։ Անթվական են մեծ մասամբ տապանագրերը։ Վերջիններիս թիվը Սանահնում 69 է, որից 50-ը թվական չունեն։ Բովանդակության հիման վրա կարելի է վերականգնել 9 արձանագրության (28, 29, 30, 31, 32, 64, 144, 158 և 166) ճիշտ թվականները, մնացածների մոտավոր ժամանակը որոշել ենք զանազան միջոցներով, միշտ նկատի ունենալով գրերի հնագրական ձևերը։ Սակայն, Սանահնի վերաբերմամբ գրչության ոճով արձանագրությունների ժամանակը որոշելը խիստ դժվար է, որովհետև, ինչպես վերևում նշեցինք, գրերի ձևի մեջ ժամանակի ընթացքում փոփոխություններ քիչ են մտել և փորագրիչներն ամեն կերպ աշխատել են պահպանել գրերի հին, ավանդական ձևերը։

Սանահնի բոլոր թվակիր արձանագրությունները մինչև 18-րդ դարի վերջն իրենց վրա կրում են հայոց մեծ տոմարի թվական, միայն № 163 արձանագրությունն է, որ ունի հայոց փոքր, սարկավագաքիր տոմարի Ծb (55+1084=1139) թվականը։

19-րդ դարի բոլոր արձանագրությունների թվականները հաշված են փրկչական տոմարով և գրված են արաբական թվանշաններով, որ այդ ժամանակ, սկսած 18-րդ դարից, գործածական էին հայերի մեջ։ Այդ է պատճառը, որ 18-րդ դարին պատկանող Սանահնի միակ № 159 արձանագրությունն էլ թեև ունի հայոց մեծ տոմարի թվական, բայց գրված է արաբական թվանշաններով։

Սանահնի վանքը թեև իր հիմնարկման օրից, այսինքն 10-րդ դարից սկսած, մշտապես շեն է եղել, թերևս փոքրիկ ընդմիջումներով ջարդերի ժամանակ, որոնց մասին տեղեկություններ կան վիմական արձանագրությունների մեջ, բայց նրա վրայի վիմական արձանագրությունների մեծագույն մա-